

Հարց Ի՞նչ սկզբունքներով է գերիշխող օպերատորը պարտավոր տրամադրել փոխկապակցում:

Պատասխան

1) փոխկապակցման տրամադրման պայմանները պետք է.

ա) համանման դիրքեր գրավող անձանց նկատմամբ լինեն ոչ խտրական,

բ) փոխկապակցման տեխնիկական պայմանների, փոխկապակցման կետերի թվաքանակի և գտնվելու վայրի առումով լինեն ողջամիտ և թափանցիկ,

գ) ներառեն «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ԼՂՀ օրենքի 47-րդ հոդվածում նշված սկզբունքների համաձայն հաշվարկվող վճարները.

2) փոխկապակցումը պետք է Կարգավորողի կողմից հաստատվի փոխկապակցման դիմումի մեջ նշվող ցանկացած կետում.

ա) փոխկապակցման օրինակելի առաջարկի շրջանակներում օպերատորի կողմից փոխկապակցման պայմաններին համաձայնություն տալուց հետո ոչ ուշ, քան քառասունհինգ օրվա ընթացքում,

բ) փոխկապակցման պայմանագրի շրջանակներում դիմումի ստացվելուց հետո՝ երկու ամսվա ընթացքում, բացառությամբ, եթե անհրաժեշտ է հատուկ կառույց: Նշված դեպքում կողմերը պայմանավորվում են խելամիտ ժամկետների մասին,

3) գերիշխող օպերատորը պարտավոր է փոխկապակցման համար դիմող օպերատորին տրամադրել փոխկապակցման համար անհրաժեշտ տեղեկատվություն,

4) գերիշխող օպերատորը պարտավոր է փոխկապակցման համար դիմող օպերատորից ստացված տեղեկություններն օգտագործել բացառապես փոխկապակցման ծառայություններ տրամադրելու նպատակով և այդ տեղեկությունները երրորդ անձանց, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, չհրապարակել,

5) գերիշխող օպերատորը պարտավոր է նախապես ողջամիտ ժամկետում ծանուցել փոխկապակցված օպերատորին գերիշխող օպերատորի ցանցի տեխնիկական ստանդարտների կամ աշխատանքի առանձնահատկությունների մեջ տեղի ունեցող փոփոխությունների մասին,

6) գերիշխող դիրք ունեցող օպերատորը փոխկապակցումը պետք է տրամադրի նույն պայմաններով, ինչպես տրամադրում է իրեն կամ իրեն փոխկապակցված անձին: